

ԱՊԱՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՈՒՄԸ ԵՎ ԿՐՃԱՏՈՒՄԸ

ԱՊԱՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ 1961 թ. ԿՈՆՎԵՆՑԻԱՆ

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ՝ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԿՈՉԸ

Աշխարհով մեկ միլիոնավոր մարդիկ գրկված են քաղաքացիությունից: Մա լրջագույն մտահոգության առարկա է: Ապաքաղաքացիության կրճատման մասին կոնվենցիան այս խնդրի հաղթահարման կարևոր գործիք է: Շատ պետություններ արդեն ունեն օրենսդրություն, որը համահունչ է Կոնվենցիայի դրույթներին և որի ի կատար ածելը մեծ ծախսեր չի ենթադրում: Մակայն այս փաստաթղթին միացած պետությունների թիվը փոքր է: Մա պետք է շտկվի: Ես խոստանում եմ իմ գրասենյակի անվերապահ աջակցությունն այն կառավարություններին, որոնք միանալու ցանկություն կհայտնեն:

Անտոնիո Գուտերես

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒՄԸ

Քաղաքացիությունը պետության և անձի իրավական միությունն է: Քաղաքացիությունը մարդկանց պատկանելության զգացում է տալիս, բայց, որ առավել կարևոր է, հնարավորություն է ընձեռում օգտվելու բազմատեսակ իրավունքներից: Հետևաբար քաղաքացիություն չունենալը, դրանից զրկվելը կարող է մարդկանց ծանր կացության մեջ դնել, որոշ դեպքերում մինչև իսկ կործանարար լինել այդպիսի անհատների համար:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի Հոդված 15-ը սահմանում է, որ օյուրաքանչյուր ոք ունի քաղաքացիության իրավունք: Այս խոսքերով միջազգային հանրությունը ճանաչել է, որ յուրաքանչյուր անհատ, ուր էլ որ լինի, պետք է քաղաքացիությամբ իրավականորեն կապված լինի պետությանը: Այլ կերպ ասած՝ միջազգային իրավունքը հստակորեն սահմանում է, որ ապաքաղաքացիության դեպքերից հարկավոր է խուսափել:

Չնայած այս աներկբա միջազգային համոզմանը, ապաքաղաքացիացման նորանոր դեպքեր շարունակում են ի հայտ գալ: Ապաքաղաքացիության խնդիրների հաղթահարումը 21-րդ դարում դեռևս շարունակում է գերխնդիր մնալ: Ներկայումս աշխարհում քաղաքացիությունից զրկված մարդկանց թիվը հասնում է 12 միլիոնի:

Պետությունները պատասխանատու են քաղաքացիության շնորհման համար: Յուրաքանչյուր պետություն իր ներքին օրենսդրությամբ սահմանում է քաղաքացիության շնորհման և քաղաքացիությունից զրկելու չափորոշիչները: Հետևաբար, պետություններն են, որ պետք է գործողությունների դիմեն՝ ինքնուրույն կամ այլ պետությունների հետ համագործակցությամբ, որպեսզի երաշխավորվի յուրաքանչյուրի՝

քաղաքացիության իրավունքը: Թեև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը հաստատում է, որ յուրաքանչյուր ոք քաղաքացիության իրավունք ունի, այն չի սահմանում կոնկրետ քաղաքացիությունը, որի իրավունքն ունի անձը: Հստակ կանոնների այս բացակայությունը կարող է նպաստել ապաքաղաքացիացմանը: Հետևաբար պետությունները մշակել են լրացուցիչ չափորոշիչների շարք, որոնք ընդունվել են 1961 թվականին՝ տեղ գտնելով Ապաքաղաքացիության կրճատման մասին կոնվենցիայում (□1961 թ. կոնվենցիա□), ի ճանաչումն ապաքաղաքացիացումը կանխելու և կրճատելու նպատակով հետագա միջազգային համագործակցության անհրաժեշտության:

Գնալով մեծանում է այն պետությունների թիվը, որոնք ապաքաղաքացիության կանխման իրենց միջազգային պարտավորությունը կատարելու համար դիմում են 1961 թ. կոնվենցիայի օգնությանը: Ճիշտ է, 2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ Կոնվենցիային անդամակցած պետությունների թիվը 37-ն էր, սակայն դրա դրույթների ներգործությունը նշանակալիորեն ավելի լայն ընդգրկում ունի, քանի որ շատ պետություններ քաղաքացիությանը վերաբերող իրենց օրենսդրության մեջ Կոնվենցիայի դրույթներից տարրեր են ներառել:

ԻՆՉՈՒ՞Ք Է ՔԱՂԱՔԱՅԻՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼԸ ԿԱՐԵՎՈՐ

Քաղաքացիությունը մարդկանց օժտում է ինքնության գիտակցմամբ և հանգուցային դեր ունի հասարակությանը անձի լիիրավ ներգրավվածության համար: Առանց քաղաքացիության մարդիկ սովորաբար դուրս են մնում քաղաքական գործընթացներից, քանի որ զրկվում են քվեարկելու իրավունքից: Ավելին, միջազգային օրենքների համաձայն՝ միայն □քաղաքացիներն□ անվերապահ իրավունք ունեն մուտք գործելու և բնակություն հաստատելու որևէ երկրում: Հետևաբար քաղաքացիությունից զուրկ մարդիկ կարող են արդյունքում զրկվել բնակության վայր ունեցողի կարգավիճակից կամ, որ ավելի վատ է՝ ենթարկվեն երկարատև կալանքի: Քաղաքացիությունից զրկված լինելը դժվարություններ է առաջացնում նաև մի շարք այլ ոլորտներում՝ ճամփորդելուց մինչև կրթություն և առողջապահություն:

Քաղաքացիությունից զրկված լինելը մարդկանց խանգարում է լիովին իրացնել իրենց ներուժը, ինչը կարող է ի վերջո հանգեցնել հասարակական բախումների և ապակայունացման՝ մինչև իսկ հասարակական լարվածության և տարհանումների: Ապաքաղաքացիության կանխումը և կրճատումը նման խնդիրների պատճառներից մեկի հաղթահարման ուղղությամբ արդյունավետ քայլեր են:

ԻՆՉՈՒ՞Մ Է 1961 թ. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԱՐԴԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թեև վաղուց պարզ է դարձել, որ ապաքաղաքացիացման երևույթից հարկ է խուսափել, և որ այս նպատակին հասնելը հնարավոր է միայն միջազգային համագործակցությամբ, շատ պետություններ դեռևս միջոցներ չեն ձեռնարկում յուրաքանչյուրի՝ քաղաքացիություն ունենալու իրավունքը երաշխավորելու համար: Այն պատճառով, որ քաղաքացիության շնորհման կամ դրանից զրկման առնչությամբ պետությունից պետություն մոտեցումները տարբեր են, որոշ անհատներ դեռևս շարունակում են հայտնվել

քաղաքացիությունից զրկվածի իրավիճակում: Այսպիսի բացթողումները շտկելու համար ամենակարևորն ընդհանուր կանոններ ունենալն է: 1961 թ. կոնվենցիան միակ համընդհանուր փաստաթուղթն է, որ ապաքաղաքացիացման սպառնալիքին արդար և արդյունավետ արձագանքելու համար հստակ սահմանված, կոնկրետ և մանրամասն միջոցներ է առաջարկում: 1961 թ. կոնվենցիային անդամակցումը պետություններին գործիք է տալիս քաղաքացիության առնչությամբ վիճաբանություններից խուսափելու կամ դրանք լուծելու, ինչպես նաև ապաքաղաքացիացումը կանխելու և կրճատելու նպատակով միջազգային աջակցություն ստանալու համար: Մեծ թվով պետությունների անդամակցումը, համընդհանուր կանոնների համակարգի հաստատմամբ, նաև կնպաստի միջազգային հարաբերությունների բարելավմանը և կայունության ձեռքբերմանը:

Կոտ Դիվուարի տներից մեկի պատին նկարված քարտեզը պատկերացում է տալիս անկախությունից առաջ և հետո երկրի և հարևան պետությունների միջև բնակչության տեղաշարժերի մասին: Պետությունների՝ քաղաքացիության մասին օրենքների միջև հակասությունները կարող են հանգեցնել քաղաքացիությունից զրկվելուն: Մա ավելի հավանական է, երբ մարդիկ բնակվում են իրենց քաղաքացիության երկրից դուրս, կամ արտասահմանում երեխաներ ունեն: Նմանօրինակ խնդիրներից կարելի է խուսափել՝ քաղաքացիության մասին օրենքները համալրելով երաշխիքներով, ինչպիսիք սահմանված են 1961 թ. կոնվենցիայում: Ծննդյան գրանցումը և փաստաթղթերի տրամադրումը ևս խիստ կարևոր են, քանի որ փաստում են անձի՝ մեկ կամ մի քանի պետությունների հետ ունեցած իրավական կապերը:

ԻՆՉՊԵՍ Է 1961 թ. ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ՕԳՆՈՒՄ ԽՈՒՄԱՓԵԼ ԱՊԱՔԱՂԱՔԱՑԻԱՅՈՒՄԻՑ

Ո՞ր դեպքերին է վերաբերում 1961 թ. կոնվենցիան

1961 թ. կոնվենցիան քաղաքացիության տրամադրման կամ դրանից չզրկելու առնչությամբ կանոններ է սահմանում միայնքաղաքացիությունից զրկվելու վտանգին ենթակա անձի վերաբերյալ: Այլ կերպ ասած՝ 1961 թ. կոնվենցիայի դրույթներն առաջարկում են ապաքաղաքացիացման դեմ մանրակրկիտ ձևակերպված երաշխիքներ, որոնք պետք է իրացվեն պետության՝ քաղաքացիության մասին օրենքի ճանապարհով, առանց այդ օրենքի այլ չափանիշների հստակեցման: Այս մի քանի պարզ երաշխիքներից զատ, պետություններն ազատ են քաղաքացիության մասին իրենց օրենսդրության բովանդակությունը մշակելիս: Այդուհանդերձ՝ այդ օրենսդրությունը պետք է համահունչ լինի քաղաքացիության առնչությամբ այլ միջազգային չափորոշիչներին:

Ինչպե՞ս կարող է 1961 թ. կոնվենցիան օգնել պետություններին՝ կրճատելու ապաքաղաքացիությունը

1961 թ. կոնվենցիայով սահմանված երաշխիքները կիրառելով բոլոր այն դեպքերում, երբ անձին սպառնում է քաղաքացիությունից զրկվելու վտանգը, պետությունները կարող են *կանխել* ապաքաղաքացիացման նոր դեպքերը: Բայց 1961 թ. կոնվենցիայի դրույթները նույնքան կարևոր են ապաքաղաքացիացման *կրճատման* համար: Ահա թե ինչպես: Նախ՝ ապաքաղաքացիացման կանխումը ժամանակի ընթացքում հանգեցնում է ապաքաղաքացիության կրճատման: Երկրորդ՝ ապաքաղաքացիացումից հետագայում խուսափելու համար իրենց ներքին օրենսդրությունը 1961 թ. կոնվենցիայում մանրամասնած երաշխիքներին համապատասխանեցնելով՝ պետությունները լրացուցիչ հնարավորություն են ստանում այս առիթն օգտագործելու ապաքաղաքացիության կրճատման համար: Օրինակ՝ պետությունները կարող են նոր որդեգրած երաշխիքները կիրառել հետադարձ կերպով, ինչը քաղաքացիությունից զրկված անձանց քաղաքացիություն ստանալու հնարավորություն կտա:

Ի՞նչ գործողություններ է պահանջում 1961 թ. կոնվենցիան պետություններից

Գոյություն ունի չորս հիմնական ոլորտ, որոնցում Ապաքաղաքացիության կանխման և կրճատման մասին 1961 թ. կոնվենցիան կոնկրետ և հանգամանալից երաշխիքներ է առաջադրում պետություններին՝ ապաքաղաքացիությունը կանխելու և կրճատելու նպատակով իրականացնելու համար: ՄԱԿ ՓՀԳՀ-ն կարող է տեխնիկական աջակցություն առաջարկել պետություններին, օգնելով, որ ապահովվի այդ երաշխիքների արտացոլումը քաղաքացիությանը վերաբերող նրանց օրենսդրության մեջ և գործնականում:

➤ **Միջոցներ երեխաների ապաքաղաքացիացումից խուսափելու համար**

Հոդվածներ 1-4-ը վերաբերում են երեխաների ապաքաղաքացիացման կանխմանը: Պետությունները պետք է քաղաքացիություն շնորհեն այն երեխաներին, որոնք հակառակ դեպքում գրկված կլինեն քաղաքացիությունից և որոնք կապված են պետությանը՝ *այնտեղ ծնված լինելու կամ ծագման* փաստով: Հետևաբար այն դեպքում, երբ երեխաները ծնվել են տվյալ երկրում, բայց ստացել են օտարահպատակ ծնողի քաղաքացիությունը, պետությունը պարտավորված չէ քաղաքացիություն շնորհել: Քաղաքացիությունը շնորհվում է ծնվելիս՝ օրենքի ուժով կամ դիմումի համաձայն: 1961 թ. կոնվենցիան պետություններին թույլ է տալիս քաղաքացիության շնորհումը ենթակայել որոշակի հանգամանքների, ինչպես, օրինակ, որոշակի ժամանակահատվածում մշտական բնակության փաստը: Հոդված 2-ի համաձայն պետությունները պարտավոր են քաղաքացիություն շնորհել ընկեցիկ երեխաներին (որոնք հայտնաբերվել են իրենց տարածքում):

➤ **Միջոցներ քաղաքացիությունը կորցնելու կամ դրանից հրաժարվելու դեպքում ապաքաղաքացիացումից խուսափելու համար**

Հոդվածներ 5-7-ը վերաբերում են ապաքաղաքացիացման կանխմանն ավելի մեծ տարիքում՝ նախքան քաղաքացիության կորուստը կամ դրանից հրաժարվելը պահանջելով նախկին քաղաքացիության առկայություն կամ նոր քաղաքացիության ձեռքբերման հավաստում: Այս կանոնը երկու բացառություն է թույլատրում. պետությունը, այլ բավարար պայմանների առկայության պարագայում, կարող է քաղաքացիությունից զրկել քաղաքացիություն ստացած անձին, ով այնուհետև երկարատև բնակություն է հաստատել արտասահմանում կամ քաղաքացուն, ով ծնվել է արտասահմանում և չափահաս դառնալու պահին չի հանդիսանում այդ պետության քաղաքացին:

➤ **Միջոցներ քաղաքացիությունից զրկելու պատճառով ապաքաղաքացիացումից խուսափելու համար**

1961 թ. կոնվենցիայի Հոդվածներ 8-9-ը վերաբերում են քաղաքացիությունից զրկելու դեպքերին: Պետություններն իրավունք չունեն քաղաքացիությունից զրկելու ռասայական, էթնիկ, կրոնական կամ քաղաքական հիմքով: Չի թույլատրվում նաև քաղաքացիությունից զրկելը, որը կհանգեցնի ապաքաղաքացիացման, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ անձը քաղաքացիությունն ստացել է խարեության կամ թյուր տեղեկություններ հայտնելու արդյունքում: Պետությունները պահպանում են

անձին քաղաքացիությունից զրկելու իրավունքը, մինչև իսկ եթե դա կհանգեցնի ապաքաղաքացիացման, այն դեպքերում, երբ տվյալ անձը կատարել է գործողություններ, որոնք հակասում են հավատարմության պարտքին, կամ պաշտոնապես հավատարմության երդում է տվել մեկ այլ պետության: Անձին քաղաքացիությունից զրկելու որոշում կայացնելիս պետությունը պետք է կշռադատի այս պատժամիջոցի համարժեքությունը՝ հաշվի առնելով դեպքի բոլոր հանգամանքները: Քաղաքացիությունից զրկելու ողջ գործընթացը պետք է ընթանա օրենքին համապատասխան:

➤ **Միջոցներ՝ պետությունների հերթագայության համատեքստում ապաքաղաքացիացումից խուսափելու համար**

Պետությունների հերթագայությունը, ինչպես օրինակ՝ մեկ պետության կողմից տարածքի փոխանցումը մեկ այլ պետության կամ նոր պետությունների ստեղծումը, կարող է ապաքաղաքացիացման պատճառ հանդիսանալ, եթե առկա չեն համապատասխան երաշխիքներ: Նմանօրինակ դեպքերում ապաքաղաքացիացումից խուսափելը հանգուցային է հասարակական ներառման և կայունության համար: Հոդված 10-ը վերաբերում է պետությունների հերթագայության առանձնահատուկ համատեքստին, և պետություններին հորդորում է տարածքի փոխանցման բոլոր պայմանագրերում ներառել դրույթներ, որոնք կերաշխավորեն ապաքաղաքացիացման կանխումը: Եթե որևէ պայմանագիր չի կնքվում, տվյալ պետությունը կամ պետությունները պետք է իրենց քաղաքացիությունը շնորհեն այն անձանց, ովքեր հակառակ դեպքում տարածքի փոխանցման արդյունքում կարող են զրկվել քաղաքացիությունից:

Պահանջում է արդյոք 1961 թ. կոնվենցիան, որպեսզի պետություններն ընդունեն *jus soli* դոկտրինը

ՌԲԿ: 1961 թ. կոնվենցիան պետություններին չի պարտադրում քաղաքացիություն շնորհել իր երկրում ծնված բոլոր երեխաներին (*jus soli* դոկտրինը), և ոչ էլ՝ բոլոր երեխաներին, որոնց ծնողներից մեկն այդ երկրի քաղաքացի է (*jussanguinis* դոկտրինը): Կոնվենցիան թե՛ ծննդյան վայրը, թե՛ ծագումը ճանաչում է որպես ծնվելիս քաղաքացիություն շնորհելու չափանիշ: Հետևաբար Կոնվենցիան երաշխիքներ է պարունակում թե՛ մեկ, թե՛ մյուս դոկտրինի հիման վրա ապաքաղաքացիացումից խուսափելու համար: Եթե երեխային սպառնում է ապաքաղաքացիություն, բայց նա պետության հետ կապ ունի նրա տարածքում ծնված լինելու կամ նրա քաղաքացու երեխան հանդիսանալու առումով, 1961 թ. կոնվենցիան անդամակից տվյալ պետությունից պահանջում է երեխային քաղաքացիություն շնորհել: Քաղաքացիության նման շնորհումը կարող է ենթակա լինել մի շարք հավելյալ հանգամանքների:

Արդյո՞ք 1961 թ. կոնվենցիան ապաքաղաքացիության կանխմանը և կրճատմանն ուղղված միակ փաստաթուղթն է

ՌԲԿ: Շատ այլ միջազգային իրավական փաստաթղթեր, ինչպես օրինակ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, ճանաչում են քաղաքացիության իրավունքը և ազդեցություն ունեն

պետությունների՝ ապաքաղաքացիության կանխման և կրճատման գործելակերպի վրա: Նման փաստաթղթերից են.

- Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան, որը պետություններին պարտավորեցնում է ապահովել քաղաքացիության իրավունքից օգտվելը՝ առանց ռասայական, ազգային կամ էթնիկ տարբերակման,
- Երեխայի իրավունքների կոնվենցիան, որն ամրագրում է յուրաքանչյուր երեխայի՝ քաղաքացիություն ձեռք բերելու իրավունքը,
- Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան, որը քաղաքացիության ձեռքբերման և երեխաներին իրենց քաղաքացիության փոխանցման առումով կանանց և տղամարդկանց միջև հավասարության կոչ է անում:

Քաղաքացիությունից զրկված անձանց կարգավիճակի մասին 1954 թ. կոնվենցիան, բացի քաղաքացիությունից զրկված անձանց պաշտպանության հատուկ միջոցներ առաջարկելը, նաև պետություններին կոչ է անում հեշտացնել քաղաքացիության շնորհումը ապաքաղաքացիության խնդրի հաղթահարման համատեքստում:

Գոյություն ունեն խնդրին առնչվող նաև տարածաշրջանային չափորոշիչներ, որոնք օգնում են կանխել և կրճատել ապաքաղաքացիությունը, ինչպես Երեխաների բարեկեցության և իրավունքների մասին աֆրիկյան խարտիայի Հոդված 6-ը, Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի Հոդված 20-ը, Իսլամում երեխայի իրավունքների մասին պայմանագրի Հոդված 7-ը, ինչպես նաև Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիայի մի շարք դրույթներ: Հետևաբար շատ պետություններ արդեն քաղաքացիության իրավունքի իրացմանը նպաստելու ուղղությամբ կարևոր միջազգային պարտավորություններ են ստանձնել: Այս պարտավորությունները լրացնում են 1961 թ. կոնվենցիայում ամրագրվածները: Այդուհանդերձ 1961 թ. կոնվենցիան ապաքաղաքացիությունից խուսափելու համընդհանուր երաշխիքներ առաջարկող դեռևս միակ փաստաթուղթն է: Այսպիսով այն ուղղված է որևէ առանձին տարածաշրջանում հնարավոր՝ քաղաքացիության խնդիրներին, բայց և այն խնդիրներին, որոնք պահանջում են տարբեր տարածաշրջաններում պետությունների կողմից ընդհանուր օրենքների կիրառում:

ԻՆՉՊԵՍ Է ՄԱԿ ՓՀԳՀ-ն ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱԶԱԿՑՈՒՄ ԱՊԱՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան պետություններին ապաքաղաքացիությունից խուսափելու գործում աջակցության համար ՓՀԳՀ-ին է ընտրել ոԲԿ միայն էլնելով այն հանգամանքից, որ փախստականների և քաղաքացիությունից զրկված անձանց խնդիրները հաճախ համընկնում են, այլև որովհետև ապաքաղաքացիության խնդիրներով զբաղվելը մի շարք առումներով պահանջում է նմանատիպ

մոտեցումներ, ինչ և փախստականների խնդիրներով զբաղվելը: Թե՛ Բ առաջին, թե՛ Բ երկրորդ խումբը պաշտպանության կարիք ունեն:

ՄԱԿ ՓՀԳՀ-ն պետություններին օգնում է իրականացնել Ապաքաղաքացիության կրճատման 1961 թ. կոնվենցիան, նրանց օրենսդրական առումով տեխնիկական խորհրդատվություն առաջարկելով, ինչպես նաև ապաքաղաքացիությունը կանխելու և կրճատելու ուղղությամբ միջոցառումների իրականացմանը գործնական աջակցությամբ: Ապաքաղաքացիության վերաբերյալ ՓՀԳՀ-ի համընդհանուր մանդատը ավելի մեծ գորություն է ձեռք բերում 1961 թ. կոնվենցիայի Հոդված 11-ով շնորհված առանձնահատուկ պարտավորությամբ. օգնել անհատներին, ովքեր կարող են օգտվել փաստաթղթի դրույթներից՝ իրենց պահանջը համապատասխան պետական մարմիններին ներկայացնելու:

ԿԱՊԸ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ 1954 թ. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՀԵՏ

Մինչև իսկ Ապաքաղաքացիության կրճատման մասին 1961 թ. կոնվենցիայի և ապաքաղաքացիության կանխմանն ու կրճատմանը վերաբերող այլ միջազգային չափորոշիչների ընդունումից և իրականացումից հետո էլ պետությունները կարող են քաղաքացիությունից զրկված անհատների կամ խմբերի խնդիրների բախվել: Հետևաբար կենսականորեն անհրաժեշտ է ունենալ քաղաքացիությունից զրկված անձանց պաշտպանության երաշխիք հանդիսացող համապատասխան գործիքներ: Քաղաքացիությունից զրկված անձանց կարգավիճակի մասին 1954 թ. կոնվենցիան քաղաքացիությունից զրկված քաղաքացիների կարգավիճակի կարգավորմանը և բարելավմանն ուղղված և նրանց՝ իրենց հիմնական իրավունքներից ու ազատություններից առանց խտրականության օգտվելու երաշխիքը հանդիսացող հիմնական միջազգային փաստաթուղթն է: Այս *երկու*՝ 1954 և 1961 թթ. Ապաքաղաքացիության մասին կոնվենցիաներին անդամակցումը որոշիչ քայլ է՝ պետություններին ապաքաղաքացիության խնդիրներով զբաղվելու համար զինելու առումով: 1954 թ. կոնվենցիայի մասին ավելի հանգամանակից կարելի է տեղեկանալ *Քաղաքացիությունից զրկված անձանց պաշտպանությունը. Քաղաքացիությունից զրկված անձանց կարգավիճակի մասին 1954 թ. կոնվենցիան* (ՄԱԿ ՓՀԳՀ, 2010 թ.) նյութերից:

1961 թ. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքացիության կրճատման մասին 1961 թ. կոնվենցիային անդամակցումը.

- Պետությունների համար մարդու իրավունքներին և մարդասիրական չափորոշիչներին, ներառյալ քաղաքացիության իրավունքին իրենց հավատարմություննարտահայտելու միջոց է:
- Պետություններին հնարավորություն է տալիս՝ ապաքաղաքացիությունից խուսափելու համընդհանուր երաշխիքների ճանաչման միջոցով, առանց քաղաքացիություն շնորհելու պետության սուվերենությունը խախտելու, լուծումներ գտնել այն բացթողումների համար, որոնք հետևանք են աշխարհով մեկ քաղաքացիության շնորհման տարբեր մոտեցումների:

- Համընդհանուր երաշխիքների խթանման միջոցով նպաստում է ապաքաղաքացիության սպառնալիքին պետության արձագանքի իրավական թափանցիկությանը և կանխատեսելիությանը:
- Պետություններին զինում է քաղաքացիության հետ առնչվող վիճաբանություններից խուսափելու կամ դրանք կարգավորելու միջոցներով, ինչով նաև նպաստում է միջազգային հարաբերությունների բարելավմանը և կայունությանը:
- Քաղաքացիության իրավունքի իրացմանը նպաստելով՝ կանխում է տեղահանությունը:
- Ամրացնում է ազգային անվտանգությունը և կայունությունը՝ ապաքաղաքացիությունից բխող բացառումից և մարզինալացումից խուսափելու միջոցով:
- Նպաստում է ձայնի իրավունքի տարածմանը և անհատների լիիրավ մասնակցությանը հասարակական կյանքին:
- ՄԱԿ ՓՀԳՀ-ին օգնում է միջազգային աջակցություն մոբիլիզացնել՝ ապաքաղաքացիության կանխման և կրճատման նպատակով:

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՎԵԼ ՀԱՃԱԽ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Ստորև ներկայացվում են Ապաքաղաքացիության կրճատման մասին 1961 թ. կոնվենցիային անդամակցելու առնչությամբ առավել հաճախ առաջադրվող հարցերի պատասխանները: Այլ հարցերի և մանրամասների քննարկումը կգտնեք *«Քաղաքացիություն և ապաքաղաքացիություն. ձեռնարկ խորհրդարանական կանոնների համար»* ձեռնարկում (ՓՀԳՀ և Միջխորհրդարանական միություն, 2005, լրամշակված 2008թ.)

- **Որքանո՞վ է կարևոր 1961 թ. կոնվենցիան այն պետությունների համար, որոնք ունեն ապաքաղաքացիությունից խուսափելու համապատասխան երաշխիքները**

Շատ պետություններ արդեն իրենց ներպետական օրենսդրություններում ընդունել են ապաքաղաքացիությունից խուսափելու համար անհրաժեշտ երաշխիքները: Նույնիսկ այս պարագայում 1961 թ. կոնվենցիային անդամակցումը շարունակում է արժեքավոր քայլ լինել ապաքաղաքացիությանը վերաբերող խնդիրների հաղթահարման համար: Դա մյուս երկրներին թույլ է տալիս իմանալ, որ տվյալ պետությունը ճանաչել է համապատասխան երաշխիքները, և նպաստում է այս համընդհանուր միջազգային չափորոշիչների ընդունմանը ողջ աշխարհում:

- **Արդյո՞ք 1961 թ. կոնվենցիան պետություններին պարտադրում է թույլատրել երկքաղաքացիությունը**

ՈՒՅ: Պետությունները կարող են շարունակել արգելել երկքաղաքացիությունը, եթե երկքաղաքացիությունից խուսափելուն առնչվող օրենքները և գործընթացները չեն հանգեցնում ապաքաղաքացիացման: Օրինակ, պետությունը կարող է պահանջել, որ քաղաքացիություն ստացող անձը, երկքաղաքացիությունից խուսափելու համար, հրաժարվի իր նախկին քաղաքացիությունից: Այդուհանդերձ, պետությունը չի կարող թույլ տալ, որ անձն իր քաղաքացիությունից հրաժարվի, քանի դեռ ձեռք չի բերել այլ քաղաքացիություն կամ այն ստանալու երաշխիքը:

- **Արդյո՞ք 1961 թ. կոնվենցիան արգելում է քաղաքացիությունից զրկելը**

ՈԲՆ: Քաղաքացիության կորուստը կամ դրանից զրկումը արգելվում է միայն 1961 թ. կոնվենցիայի պայմանների ներքո, երբ դա կարող է հանգեցնել ապաքաղաքացիության: Ավելին, ինչպես վերն ասվել է, պետություններն իրավունք ունեն քաղաքացիությունից զրկելու նույնիսկ այն դեպքում, երբ դա կհանգեցնի ապաքաղաքացիության, սակայն սահմանափակ թվով հանգամանքներում և Կոնվենցիայի Հոդվածներ 7-8-ում սահմանված պայմաններին համապատասխան:

- **Կարո՞ղ է պետությունը վերապահումներ ունենալ 1961 թ. կոնվենցիայի դրույթների առնչությամբ**

Այո՞: Միանալու պահին վերապահումները թույլատրվում են, բայց միայն Հոդված 11-ի (ՓՀԳՀ-ի դերը), 14-ի (վիճաբանությունների համար Միջազգային դատարան դիմելը) կամ 15-ի (տարածքները, որոնց համար պատասխանատու է միացող պետությունը) առնչությամբ: Համաձայն Հոդված 8-ի, պետությունները կարող են նաև միացման պահին հռչակագիր ընդունել, որով վերապահում են որոշակի սահմանափակ թվով հանգամանքներում քաղաքացիությունից զրկելու իրավունքը:

- **Ի՞նչ նկատառումներ են ընկած 1961 թ. կոնվենցիային անդամակցման հիմքում**

1961 թ. կոնվենցիային միացումը ենթադրում է համապատասխան ներքին օրենսդրության մեջ որոշակի երաշխիքների արտացոլումը երաշխավորող պարտավորության ստանձնում: Սա կարող է նշանակել քաղաքացիության մասին օրենքում փոփոխությունների ընդունում, ինչի համար ՓՀԳՀ-ն պատրաստ է տեխնիկական աջակցություն տրամադրել: Հետևաբար 1961 թ. կոնվենցիայի իրականացումը ոԲՆ ծախսատար է, ոԲՆ աշխատատար: Մեծ մասամբ երաշխիքները կիրառվում են ավտոմատ կերպով, ինչպես և քաղաքացիության մասին օրենքների շատ այլ դրույթներ: Չեն պահանջվում ծախսատար ընթացակարգեր կամ համակարգեր: 1961 թ. կոնվենցիան միացած պետություններին չի առաջարկում պաշտոնական հաշվետվության պարտավորություններ: Սակայն քաղաքացիության մասին օրենքների մասին տեղեկատվությունն այլ պետությունների և ՓՀԳՀ-ի համար հասանելի դարձնելը կարևոր երաշխիք է, որ Կոնվենցիայի դրույթները ճիշտ կիրականացվեն բոլոր անդամ պետությունների կողմից:

- **Ի՞նչ է հարկավոր, որպեսզի պետությունն անդամակցի 1961 թ. կոնվենցիային**

Պետությունը կարող է 1961 թ. Կոնվենցիային միանալ ցանկացած պահի՝ միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի գլխավոր քարտուղարին ի պահ տալով: Միանալու մասին փաստաթուղթը պետք է ստորագրված լինի արտաքին գործոց նախարարի, պետության կամ կառավարության ղեկավարի կողմից: Անդամակցության ընթացակարգի մանրամասներին և միանալու նմուշ-փաստաթղթերին կարելի է ծանոթանալ www.unhcr.org/statelessness կայքում:

Այս կինը նախկին ԽՍՀՄ քաղաքացի է, որ Ուկրաինա է եկել Հարավային Կովկասից: Նա վավեր փաստաթղթեր չունի, բայց ավելի ուշ պարզվեց, որ Վրաստանի քաղաքացի է և անձնագիր ստացավ: Ապաքաղաքացիության կանխումը հաճախ պահանջում է պարզել անձի ենթակայությունը քաղաքացիության մասին մեկ կամ ավելի

Երկրների օրենքներին: Պետք է ձեռք բերել պայմանավորվածություններ, որոնք կերաշխավորեն անհատի իրավունքների պաշտպանությունը, քանի դեռ չի հաստատվել նրանց քաղաքացիությունը, կամ քաղաքացիությունից զրկված լինելու փաստը:

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՉԵՐԸ

ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան *նշում է*, որ ներկայումս վաթսունհինգ պետություններ միացել են Քաղաքացիությունից զրկված անձանց կարգավիճակի մասին 1954 թ. կոնվենցիային, իսկ երեսունյոթ պետություններ միացել են Ապաքաղաքացիության կրճատման 1961 թ. կոնվենցիային և չմիացած պետություններին հորդորում է կշռադատել այս փաստաթղթերին միանալու հնարավորությունը:

- *Գլխավոր ասամբլեայի որոշում 64/127, ՄԱԿ-ի՝ փախստականների հարցերով զերազույն հանձնակատարի գրասենյակ, 18 դեկտեմբերի, 2009 թ.*

ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհուրդը *հաստատում է*, որ 2011-ը կնշանավորի Ապաքաղաքացիության կրճատման մասին կոնվենցիայի 50-րդ տարելիցը և այս, ինչպես նաև Քաղաքացիությունից զրկված անձանց կարգավիճակի մասին կոնվենցիային չմիացած պետություններին հորդորում է կշռադատել միանալու հնարավորությունը:

- *Մարդու իրավունքների խորհրդի որոշում 13/02, Մարդու իրավունքները և քաղաքացիությունից կամայականորեն զրկելը, 24 մարտի, 2010 թ.*

ՄԱԿ ՓՀԳՀ գործադիր կոմիտեն *հորդորում է* պետություններին՝ կշռադատելու

Ապաքաղաքացիության կրճատման մասին 1961 թ. կոնվենցիային միանալու, իսկ միացած պետություններին՝ վերապահումներից հրաժարվելու հնարավորությունը:

- *Եզրակացություն #106 (LVII) – 2006 թ.*

Ասիական-աֆրիկյան իրավաբանական խորհրդատվություն կազմակերպությունն իր անդամակից պետություններին *առաջարկում է* կշռադատել Քաղաքացիությունից զրկված անձանց կարգավիճակի մասին 1954 թ. և Ապաքաղաքացիության կրճատման մասին 1961 թ. կոնվենցիային միանալու հնարավորությունը՝ հանուն քաղաքացիությունից զրկված անձանց խնդիրներին ավելի արդյունավետ լուծումներ տալու նպատակի:

- *Ըրավական ինքնությունը և ապաքաղաքացիությունը՝ թեմայով Միջօրյա հատուկ ժողովի որոշում, 8 ապրիլի, 2006 թ.*

Ամերիկյան պետությունների կազմակերպության գլխավոր ասամբլեան *որոշում է* 1. Շեշտել քաղաքացիությունից զրկված անձանց պաշտպանության համընդհանուր փաստաթղթերի՝ Քաղաքացիությունից զրկված անձանց կարգավիճակի մասին 1954 թ. և Ապաքաղաքացիության կրճատման մասին 1961 թ. կոնվենցիաների կարևորությունը: 2. Հորդորել անդամ պետություններին, որոնք դեռևս այդ բանը չեն արել՝ վավերացրել կամ միանալ քաղաքացիությունից զրկված անձանց վերաբերող միջազգային փաստաթղթերին, նպաստել այդ փաստաթղթերին համապատասխան

կարգով դիմելու համար անհրաժեշտ ընթացակարգերի և համակարգային մեխանիզմների ստեղծմանը:

- *Գլխավոր ասամբլեայի որոշում, AG/RES. 2599 (XL-O/10), Ապաքաղաքացիության կանխումը և կրճատումը և քաղաքացիությունից զրկված անձանց պաշտպանությունը Ամերիկաներում, 8 հունիսի, 2010 թ.*

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ 1954 թ. ԿՈՆՎԵՆՑԻԱՑԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՆՄՈՒՇ-ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Քանի որ Լիազոր ներկայացուցիչները հազար ինը հարյուր վաթսուներեք թվականի օգոստոսի երեսունին ընդունել են Կոնվենցիա ապաքաղաքացիության կրճատման մասին, որը բաց է անդամակցության համար՝ համաձայն իր Հոդված 16-ի,

Եվ քանի որ վերոհիշյալ Հոդված 16-ի 4-րդ բաժնում սահմանվում է, որ անդամակցումը կատարվում է միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու միջոցով,

Վերոհիշյալի հիման վրա ներքո ստորագրյալը՝ (պետության ղեկավարի, Կառավարության ղեկավարի կամ արտաքին գործոց նախարարի տիտղոսը), սույնով հաստատում է (տվյալ պետության անվանումը) միանալու մասին:

Հավաստում եմ սեփական ստորագրությամբ, _____ ամսաթվով, երկու հազար _____ թ.:

(Պետական կնիքը և լիազոր անձի ստորագրությունը՝ ըստ անհրաժեշտության)

(պետության ղեկավարի, Կառավարության ղեկավարի կամ արտաքին գործոց նախարարի ստորագրությունը)

Կազմը.

Դալիտների մարզինալացված համայնքից այս նեպալցի տղան քնած է իր պապիկի կողքին: Նեպալի անապահով համայնքները հաճախ բախվում են քաղաքացիության և դրանից բխող իրավունքների իրացման բազմաթիվ խոչընդոտների: Աշխարհով մեկ բազմաթիվ մարդկանց համար ապաքաղաքացիությունն սկսվում է ծննդյան պահից, հաճախ այն պատճառով, որ ծնողներն իրենք զրկված են քաղաքացիությունից:

Ապաքաղաքացիության կրճատման 1961 թ. կոնվենցիան մշակվել է՝ ապահովելու, որ յուրաքանչյուր երեխա կարողանա քաղաքացիություն ստանալ, և որպեսզի ապաքաղաքացիությունը չփոխանցվի սերնդե սերունդ:

Կցանկանայի լրացուցիչ տեղեկություններ ստանալ հետևյալի վերաբերյալ.

ՄԱԿ ՓՀԳՀ գրասենյակը և ապաքաղաքացիության առնչությամբ նրանց աշխատանքը

Այցելե՛ք ՓՀԳՀ ապաքաղաքացիության մասին կայքը՝ www.unhcr.org/statelessness հասցեով: Կարող եք նաև ծանոթանալ ՓՀԳՀ գործադիր կոմիտեի՝ Միջազգային պաշտպանության վերաբերյալ համապատասխան Եզրակացություններին, մասնավորապես *Ապաքաղաքացիության բացահայտման, կանխման և կրճատման և Քաղաքացիությունից զրկված անձանց պաշտպանության* վերաբերյալ 106 Եզրակացությանը (2006 թ.):

Ապաքաղաքացիության կանխման և կրճատման մասին միջազգային օրենքը, ներառյալ

Ապաքաղաքացիության կրճատման մասին 1961 թ. կոնվենցիան

1961 թ. կոնվենցիայի, ինչպես նաև քաղաքացիության իրավունքի և ապաքաղաքացիությունից խուսափելու վերաբերյալ միջազգային այլ նորմերի շուրջ ավելի մանրամասն քննարկումների համար տեսե՛ք *Քաղաքացիություն և ապաքաղաքացիություն, ձեռնարկ խորհրդարանականների համար* ձեռնարկը (ՄԱԿ ՓՀԳՀ և միջխորհրդարանական միություն, 2005, լրամշակված 2008 թ.): 1954 թ. կոնվենցիայի վերաբերյալ ավելի մանրամասն մեկնաբանությունների համար տեսե՛ք *Քաղաքացիությունից զրկված անձանց կարգավիճակի մասին կոնվենցիա՝ պատմությունը և պարզաբանումներ* (Ռոբինսոն, 1955): Այս առնչությամբ այլ միջազգային փաստաթղթերի ծանոթանալու համար այցելե՛ք ՓՀԳՀ կայքը՝ www.refworld.org հասցեով:

Հրատարակված է՝

UNHCR

P.O. Box 2500

1211 Geneva

Switzerland

ՄԱԿ ՓՀԳՀ, սեպտեմբեր, 2010 թ.